

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով
Ո Ր Ո Շ ՈՒ Մ 11/6
20 փետրվարի 2018թ.

Քննարկվեց «ՖՈՒՏԲՈՒԼ+» ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ միջնորդությունը 18.01.2018թ. ներկայացված ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ:

«ՖՈՒՏԲՈՒԼ+» ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ բերված փաստարկները.

«ՖՈՒՏԲՈՒԼ+» թերթն անխափան լույս է տեսնում 1996թ. մարտից (22 տարի): Այն միշտ եղել է հանրապետության տպագիր սպորտային լրատվության առաջատար, իր տպաքանակով ռեկորդակիր (12.000): Ցավոք, ինտերնետային մրցակցության ներկայիս պայմաններում տպաքանակը կիսով չափ կրճատվել է, բայց Հայաստանում մնում է միակ ֆուտբոլային թերթը և հայկական ֆուտբոլի տարեգիրը:

Մինչև հիմա «ՖՈՒՏԲՈՒԼ+» ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ ընկերություն) աշխատել է ավելացված արժեքի հարկային դաշտում, քանի որ ազատված էր ավելացված արժեքի հարկից: Ուշ իմանալով նոր այն որոշման մասին, որ այսուհետ թերթերը շրջհարկի դաշտում աշխատելու դեպքում պետք է 1,5 % տուրք վճարեն շրջանառությունից, դրանից առաջ նախկինի պես արդեն հայտ էր ներկայացրել շարունակելու աշխատանքն ավելացված արժեքի հարկային դաշտում:

Ցանկալի չէ փակել «ՖՈՒՏԲՈՒԼ+»-ը: Այդ դեպքում 7-8 հոգի կզրկվեն աշխատատեղից:

«ՖՈՒՏԲՈՒԼ+»-ի հետագա անխափան աշխատանքն ապահովելու համար ընկերությունը խնդրում է չեղարկել 2018թ. հունվարի 18-ին կողմից ներկայացված հայտը և թույլ տալ գործունեությունն իրականացնել շրջհարկի դաշտում:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ «ՖՈՒՏԲՈՒԼ+» ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ-ն 2017թ. ընթացքում հանդիսացել է ավելացված արժեքի հարկ վճարող:

Միաժամանակ, ընկերության 2017թ. իրացման շրջանառությունը չի գերազանցել 115.0 մլն դրամը և կազմել է 30.9 մլն դրամ: Այսինքն, ընկերությունը բավարարել է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջներին 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու համար, սակայն 18.01.2018թ. էլեկտրոնային եղանակով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացվելու փոխարեն թյուրիմացաբար ներկայացվել է ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

ՀՀ Հարկային օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 254-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շրջանառության հարկ վճարողներ են համարվում (անկախ բացառապես արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության

տեսակներ իրականացնելու հանգամանքից) սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ շրջանառության հարկ վճարող կարող են համարվել այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը և նոտարը, որոնց նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել 58.35 միլիոն դրամը:

Մինևսույն ժամանակ, Օրենսգրքի 455-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենսգրքի 59-րդ և 254-րդ հոդվածներով սահմանված՝ նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամի շեմը, ինչպես նաև Օրենսգրքի 255-րդ հոդվածով սահմանված՝ ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամի շեմը գործում է 2019 թվականի հունվարի 1-ից, իսկ 2018 թվականի ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության ԱԱՀ-ի շեմը սահմանվում է 115 միլիոն դրամ:

Իր հերթին, Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված են այն վավերապայմանները, որոնց առկայության պայմաններում տնտեսվարող սուբյեկտը չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող:

Քննարկվող դեպքում «ՖՈՒՏԲՈԼ+» ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ-ն բավարարում է Օրենսգրքով նախատեսված բոլոր պահանջներին 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու համար:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ ընկերությունն ինքնուրույն հայտնաբերել է տեղի ունեցած թյուրիմացությունը և մինչև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ժամկետի ավարտը՝ 20.02.2018թ., հայտնել է այդ մասին, Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է հնարավորություն ընձեռել ընկերությանը շտկելու իր կողմից թույլ տրված սխալը (թյուրիմացությունը), ինչպես նաև թույլատրել սահմանված ժամկետում ներկայացնել համապատասխան հայտարարություն՝ 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Հարկային օրենսգրքի 443-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

1. Անվավեր ճանաչել «ՖՈՒՏԲՈԼ+» ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ-ի կողմից 18.01.2018թ. ներկայացված ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը:

2. «ՖՈՒՏԲՈԼ+» ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ-ի կողմից մինչև 20.02.2018թ. սահմանված կարգով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացվելու դեպքում ընկերությանը համարել շրջանառության հարկ վճարող:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ